ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Տարին վերջացաւ. նա մտաւ յաւիտենականութեան մէջ, անդառնալի։ Բայց մարդկային վիշատակագրութեան մէջ նա մնալու է այն ինչ նա իսկապէս էր. կատարուած գործերը չեն ջնջուելու, կատարուած գործերը, որ անքաքտելի կերպով շղթայակապուած են նախորդ տարուայ հետ, մնալու են կապուած նաև յաջորդ տարուայ, այս նոր 1891 թուականի հետ։ Ոչ մի տարի իւր համար առանձնակի չի կանգնած անցեալի մէջ, որպէս և ոչ մի ամիս իւր համար առանձին չի կանգնած, այլ կայ և մնում է որպէս անսահման ժամանակի մի մասը։ Ժամանակի գինը սակայն հաւասար չէ, և որպէս բոլոր ամիսները հաւասար գին չունին անցեալում, նոյնպէս և բոլոր անցած տարիները հաւասար գին չունին պատմութեան մէջ։ Խնդիրը նորանումն է թէ ինչ ներկայացրեց մեզ համար անցած 1890 թուականը։

Եւ ես ահա զգում եմ, որ 1890 թուականը նախ որ չի դատուելու ապագայում մեր հայկական մամուլի տւածովը, և երկրորդ որ այդ թուականը կարևոր տեղ է բռնելու մեր պատմութեան մէջ։ Ես, նախ քան անցնեմ իմ ամսական հաշուետուութեանս, այս Նոր-Տարուայ առիթով ուզում եմ այս մի բաղձանքս արտայայտեմ, որ ցանկանում եմ հաստատամտութիւն և եռանդ ժողովրդական գործերին կպածներին։

Դէ անցնենք այժմ մեր հնացած տարուայ դեկտեմբեր ամսին։ Այդ ամսումն է գլխաւորապէս, որ մարդիկ աշխատում են իրանց կամաւոր պարտքերը սալ թէ պարբերական մամուլին, թէ այն հիմնարկութիւններին, ուր նոքա անդամ են և թէ բարեգործութեան։ Գրեթէ միանգամից մէկից պահանջւում է անդամակցական վճարը մէկ, միւս և դուցէ երրորդ ու չորրորդ ընկերութեան համար, բաժանորդագրական վճարը ամսագրի համար, նոյնը լրագրի համար, նոյնը մի շաբաթաթերթի համար, անդամակցական վճարը կլուբի համար և էլ ինչ գիտեմ՝ ինչ ինչ հիմնարկու-

թիւնների համար։ Եւ երևակայեցէք, որ այս բոլորի վերայ միանում են նոր տարայ համար այլ և այլ կարևոր ծախքերը, վարձատրութիւնները և այլն և... գրեթէ պարտաւորիչ վճարները այլ և այլ բարեգործական գործերի օգտին տրւող կոնցերտների և ներկայացումների համար։ Եւ երևակայեցէք քաղաքակրթւած բայց «փոքր մարդու» գրութիւնը այս բոլոր պահանջների դիմաց։ Երևակայեցէք, ասում եմ, գրութիւնը մի մարդու, որը չուրջ 100 ռուբլի եկամուտ ունի ամսական։ Այդ 100 ռուբլուց, որ հազիւ բաւականանում են նորա սովորական առօրեայ ծախքերին, նա մի անգամից, մի ամսում պէտք է բաժին հանէ կլուբին աւելի քան 15 ռուբլի, երկու որ և է ընկերութիւններին աւելի քան 10 ռուբլի, բարեգործական նպատակներով տրւող կոնցերտներին ու ներկայացումներին հէնց դիցուք մինչ 10 ռուբլի, իւր լրագրին մինչ 10 ռուբլի, իւր ամսագրին 10 ռուբլի։ Դէ գումարեցէք միայն այդքանը և կը տեսնէք, որ մեր պարոնի մօտ ամսայ համար մնաց միայն 45 ռուբլի, որից այժմ բաժիններ հանէք Նոր-Տարայ արտակարգ ծախքերի համար, մանաւանդ եթէ նա ընտանիքի և գուցէ երեխաների տէր է։

Բնական է, որ քաղաքակրթական այդ պահանջներից և պարտականութիւններից լեռ չը կենալու համար, այդպիսի մի պարոնին հարկաւոր է սէր ե համոզմունք, նրան հարկաւոր է գիտակցութիւն, բարոյական ոյժ՝ զոհաբերութիւն անելու։ Պարզ է որ այն բոլորից ինչ ես վերը լիշատակեցի, էլի պարբերական մամուլն է որ ամենից շատ տուժում է «փոքր մարդու» ֆինանսական նեղութիւններից։ Բաւական է որ մի այդպիսի մարդու մօտ գիտակցութիւը մի փոքր թոյլ լինի և նա արդէն համարեա սառնասրտութեամբ զոհում է պարբերական մամուլի շահերը։

Իսկ մինչև որ միջակ կարողութեան և մինչև անգամ միջակից աւելի փոքր կարողութեան կամ եկամուտով մարդիկ չը մասնակցեն հայկական մամուլի բաժանորդագրութեանը՝ ոչ մամուլը կարող է իրան ապահովւած համարել և ոչ էլ կարող է նոյն այդ մամուլը իւր նպատակներին լիակատար կերպով հասնել։ Մամուլը պէտք է խօսէ բազմութեան, ահագին բազմութեան հետ, և այդ պատճառով պէտք է ոչ մի դասակարգ չը կարողանայ մամուլի գոյութիւնը իրանից կախւած համարել։ Իսկ դորա համար միանգամայն անհրաժեշտ է որ միջակ և ստորին խաւերը իրանց ուսերի վերայ պահեն այն ծանրութիւնները, որ միաժամանակ նոցա մտաւոր և բարոյական ոյժերը բարձրացնողներն են և ուղղութիւն ցոյց տւողները։

Իմ ընթերցողները արդէն գիտեն, թէ ես ինչ նշանակութիւն եմ տալիս մեր թատերասէրների ներկայացումներին։ Դեռ 1889 թւականին ասածս ես հարկ համարեցի մի ամիս առաջ կրկնել և այժմ, դեկտեմբերի ընթացքում տրւած ներկայացումները ինձ առիթ են տալիս վերադառնալ այդ

խնդրին։ Հանգամանքը սա է որ հայկական ներկայացումների համար մեզանում, Կովկասեան հայերից, չը կան դերասանուհիներ։ Դա մի իրողութիւն է, որ ամեն մարդ խոստովանում է արդէն շատ տարիներից ի վեր։ Բայց նոյնպէս իրողութիւն է, որ Թիֆլիսի Թատերասէրների մէջ կան թւով արդէն բաւականին շատ չնորքով խաղացող կանայք, որոնք ոչ մի դէպքում չեն կարող մի մշտական խումբ կազմել արհեստով դերասանների հետ՝ տարին տասներկու ամիս ներկայացումներ տալու համար։ Եթէ վերջին տարիներումս տուած հայոց ներկայացումների հիման վերայ դատելու լինինք—և այդպէս էլ պէտք է—, կը տեսնենք որ ոչ թէ Թատերասէրներն են լրացնում դերասանական խմբի պակասորդը, այլ, ընդհակառակը, դերասաններն են որ լրացնում են Թատերասէր խմբերի պակասորդը։ Այդ խօսքերով հայ հասարակութիւնը սիրով յաճախում է Թատերասէրների ներկայացումները, այն ներկայացումները, ուր դերակշիռ դերը կատարում են այժմեայ Թատերասէրները և ոչ այժմեայ դերասանները կամ դերասանուհիները։

Այս իրողութիւնները աչքիս առաջ ունենալով՝ ես չայտնեցի իմ կարծիքը որ Թատերասէրները մեր Թատրոնական գործի մէջ կատարում են մի պատմական դեր և որ նոցա ներկայացումների վերայ պէտք է վերաբերել բոլորովին այլ կերպ, քան այդ սովորութիւն է մեզանում. չը պէտք է, ասում եմ ես, նայել այդ ներկայացումների վերայ որպէս պատահական և անցողական երևոյթի վերայ, այլ պէտք է նրան տալ նորա իսկական նշանակութիւնը և ուրեմն ուշք դարձնել նորա կազմակերպութեան վերայ։

Ահա նոյն միտքն է, որ այս վերջին ամսում կարծես սկսեց պարզուել մեր հասարակութեանը և որ լրագիրները աշխատեցին չայտնել թէև ոչ լիակատար կերպով։ Ամենքը ցանկութիւն չայտնեցին, որ Թատերասէրները խմբւեն աւելի յաճախ ներկայացումներ տալու նպատակով, հայկական Թատրոնին վերակենդանութիւն տալու համար։

Կազմակերպութեան գործը կարելի է սկսել այսպէս. բոլոր այն անձերը, որոնք Թատերասէր խմբերի գլխաւոր ուժերն են կազմում, պէտք է միանան մի կոմիտետ կազմելու համար։ Այդ կոմիտեի ձեռքում միացած կը լինի մեր Թատրոնական գործը։ Կոմիտետը, որը կ'ունենայ իւր նախագահը կամ նախագահուհին, իւր հաշուապահ անդամը և դանձապահ անդամը, կը սկսի իւր գործը ցուցակագրելով մեր բոլոր տպած թէ անտիպ պիեսները. կ'աշխատէ ձեռք բերել նոցա, կը վճռէ լրացնել եղածը նոր պիեսներով՝ եւրոպական Թատրոնների բեպերտուարից ընտրութիւններ անելով և Թարգմանել կամ փոխադրել տալով նոցա։ Հարկաւոր եղած ծախքերը ծածկելու համար նա կը սարքէ մի երկու ներկայացումներ։ Կոմիտետը, բոլոր հարկաւոր համարած դէպքերում, կը դիմէ կոմիտետից դուրս անձերին՝ այս կամ այն տեղեկութիւնները ձեռք բերելու համար։

Կոմիտետը կը սարքէ ներկայացումներ այն նպատակներով, որոնց օգտին առհասարակ սարքւում են թատերասէրների ներկայացումները։ Ներկայացման համար կոմիտետը կը դիմէ նաև մեր դերասաններից մէկին կամ միւսին՝ համապատասխան դերը ստանձնելու համար, բայց այս պայմանով, որ ներկայացման մասնակցող դերասանները անպատճառ վարձատրւեն, մինչդեռ թատերասէրները կը խաղան առանց վարձատրութեան։ Կոմիտետի գլխաւոր հոգսերից մէկը կը լինի՝ նոր ոյժեր առաջ բերել. և այդ նամանաւանդ հեշտութեամբ կը յաջողէ նրան, որ ներկայ թատերասէրների հետ բեմ դուրս գալու դէմ այլ և այլ ընտանիքներ չեն ունենալ այն գուցէ բոլորովին հիմնաւոր նախապաշարմունքը, որով յարգւած կանայք և օրիորդներ, նոցա ծնողներն և ամուսինները առհասարակ վերաբերւում են դէպի թատրոնական գործը, դերասաններին համարելով անպատկառ մարդիկ։

Այս կերպ, որպէս տեսնում էք, ոչ միայն թատրոնական գործը նորան սիրողների և հասկացողների ձեռքն ընկած կը լինի, այլ և նոյն իսկ դերասանները կ'ըստանան վարձատրութիւն և որ գլխաւորն է՝ հասարակութիւնը առաջ քշած կը լինի իւր մէջ թագնւած բոլոր շնորհքով, կամ բեմական ընդունակութիւն, գուցէ տաղանդ ունեցողներին, մի բան, որ ես առայժմ չեմ կարող սպասել մի ուրիշ կազմակերպութիւնից։—

Բնական է որ այս նախագծով՝ այն, ինչ կոչւում է «դրամատիկական ակումբ» աւելի ևս կը խորասուզւի անգործութեան և անլայտութեան անդունդը, քանի որ առաջարկածս թատերասիրական կոմիտետը իւր ձեռքն առած կը լինի բոլորը, ինչ վերաբերում է հայկական բեմին։

Այն առաջին ներկայացմանը, որի մասին անցեալ տարւայ վերջին քրոնիկումս փչատակութիւն արեցի, յաջորդեցին դեկտեմբեր ամսին թատերասէրների երկու ուրիշ ներկայացումներ, «Ուզան», դրամա հինգ գործողութեամբ հեղ. Մուրացանի և «Փալլուն Բղէզ» կեղծ կոմեդիան, փոխ առած Սարդուից և թարգմանած ռսերէնից։ Այսպիսով այս ձմեռւայ սեղոնում երեք ներկայացումներ տուեցին երեք ջոկ ջոկ ու իրար հետ կապ չունեցող խմբերից։ Եւ բոլոր ներկայացումներն էլ թէ մուտքի և թէ խաղի կողմից յաջողեցին, եթէ միայն գլխաւոր գործող անձնաւորութիւնները ի նկատի առնելու լինինք։ Իբրև նոր յայտնւող բեմական ոյժ, այս անգամներին մանաւանդ փչատակելու է տիկին Շահ-Մելիքեան, որը իւր խելօք և զգացող խաղով արդարացի կերպով գրաւեց հասարակութեան ուշադրութիւնը, և անկասկած է, որ թատերասիրական ապագայ միայնալ խումբը նորանում կը գտնի մի կոչւած անդամ և լաւ դերակատար, առաւելապէս դրամայական պիեսներում։—Հասարակութեան մի մեծ մասի

համար նոր էր նաև պր. Տէր-Պետրոսեան (Օրդուբաթեան), որը հայկական բեմը թողել էր Ադամեանի ժամանակներից ի վեր և այժմ նորից ասպարէզ է դուրս գալիս՝ ուսաց խմբերում տարիներ շարունակ խաղալուց յետոյ։ Ներկայ յունուարին նա երևալու է Ուրիէլ-Ակոստայի դերում և հասարակութեանը առիթ տուած կը լինի նորա դերասանական ոյժի մասին աւելի ճիշտ գաղափար կազմելու։

Բայց այն երեք պիեսներից, որոնք ցայժմ ներկայացուցին ներկայ սեզոնում, «Ռուզանը» միակն է, որ իւր բովանդակութիւնով դրական հետաքրքրութիւն է ներկայացնում։ Ես գնացի «Ռուզանի» ներկայացմանը մասամբ արդէն նախապաշարուած ոչ ի վնաս, այլ յօգուտ նորան։ Զգիտեմ այլ ևս «Արևելեան Մամուլի» որ տարեայ համարներից մէկում, բայց 1880 թուականի մօտերքին, արտասահման եղածս ժամանակ կարդացած էի Թիֆլիսի նախկին թատրոնական կոմիտեի անդամներից մէկի՝ պր. Գրիգ. Փրիդոնեանի մի գրուածքը «Ռուզանի» առաջին ներկայացման մասին։ Գրուածքից ինձ մօտ միայն ընդհանուր տպաւորութիւնն էր մնացել. և այդ տպաւորութիւնը ոգևորիչ էր։ Իբր մի նոր և բացառիկ երևոյթ էր ներկայացուած մեր թատերական գրականութեան մէջ այդ «Ռուզանը»։ Հետեւեալ տարիներում լսածներս միմիայն աւելի դրդեցին իմ հետաքրքրութիւնը «Ռուզանի» համար և ես միայն զարմանում էի թէ ինչու չեն կրկնում և մինչև անգամ ամեն տարի չեն տալիս «Ռուզանի» ներկայացումը։

Բայց տեսայ և հիասթափուեցայ։ Սրտնկալեցէք։ Մեզնից մօտ 650 տարի առաջ Արցախի (Ղարաբաղ) իշխանութեան վերայ յարձակւում են բարբարոս թուրքերը։ Զարմաղանի զօրքերը, առաջնորդութեամբ Զարմաղանի եղբօր և Զարմաղանի երիտասարդ որդու՝ Բողալի։ Այդ յարձակումը կատարւում է անսպասելի կերպով և մի այնպիսի ժամանակ, երբ Արցախի իշխանը իւր աղջիկ Ռուզանին ուղում է կնութեան տալ իւր քաջ զօրապետ Ատրներսէհին, որի յաղթութիւնները տարիներով ապահովել էին Արցախի սահմանները թշնամիներից։ Լսելով այդ բոթը, Արցախի իշխանը պատրաստւում է կռուել։ Բայց նախ աշխատում է խաղաղ միջոցներով հեռացնել թշնամուն և պատգամաւորութիւն է ուղարկում Թաթարների զօրապետի մօտ՝ պատւելով նորան տալ և այլ պարգևներով։ Բայց այդ ժամանակամիջոցում արդէն մատնիչի մատը խառնւում է գործի մէջ։ Սնապա հայադն իշխանը, վիրաւորուած լինելով, որ Արցախի իշխանը իւր աղջիկ Ռուզանին կնութեան է տալիս Ատրներսէհին և ոչ թէ իրան, անցնում է Թաթարների բանակը և ամեն կերպ աշխատում Թաթարների ախորժակը գրգռել՝ Արցախի և նորա իշխանի հարստութիւնների նկատմամբ։ Սնապան այդպիսի հաւատարիմ ծառայութիւնների համար

Թաթարների զօրապետը խոստանում է նորան նշանակել իշխան Արցախի։ Նոյն այդ դաւաճանը Բողալի ուշադրութիւնն է դարձնում և Ռուզանի, իբր մի հաղուադիւտ գեղեցկութեան վերայ։ Բուղան իրօք տաքանում է Ռուզանին կնութեան առնելու գաղափարով։ Դաւաճանը սովորեցնում է նաև ամենահեշտ ճանապարհը՝ Արցախի իշխանին հնազանդեցնելու համար՝ Թաթարները կը բռնեն հազար հոգի Արցախի իշխանի հպատակներից՝ ծեր, կին, երեխայ, շղթայակապած նոցա կը կանգնեցնեն ամրոցի առջև, ամեն մէկի մօտ կը կանգնեցնեն մի-մի դահիճ և կը լայնեն Արցախի իշխանին, որ հէնց որ մերժում կ'ըստանան՝ այդ բոլոր գերիներին տեղն ու տեղը կը կոտորեն։ Պատգամաւորութիւնը վերադառնում է և լայնում Բողալի կամքը՝ Ռուզանին առնել և այդ պայմանով թողնել Արցախի իշխանի ձեռքում իւր իշխանութիւնը։ Իշխանը և սորա վեսացու զօրապետը, վիրաւորուած այդպիսի առաջարկութիւնից, վճռում են պատերազմել։ Ռուզանը, սակայն, որ ծածուկ լսում է եղել այդ բոլոր խօսակցութիւնները, յանկարծ ներս է մտնում և լայնում իւր հաստատ կամքը՝ իւր անձը մատնել թաթար Բողալին և այսպիսով ազատել հայրենիքը։ Ցորդոր է կարդում, որ ղէնքերը վայր դնեն, թուլացնում թէ հոր և թէ Արցախի զօրապետի՝ իւր նշանածի սիրտը, ծաղրում անգամ նոցա, որ մտածել ամպամ կարող են իրանց պարտականութիւնը կատարել—կուի դուրս դալով իրանցից աւելի զօրեղների դէմ։ Եւ, իբր թէ իւր հոր ու իւր նշանածի կամքի հակառակ, Ռուզանին յաջողում է փախչել տանից, գալիս ու իրան յանձնում է Բողալին, որով ազատում է այն հազար գերիներին, կատարել է տալիս իւր ցանկութիւնը՝ դաւաճան Սնադալին դըլխատել։

«Ահա այսպէս պէտք է ազատել հայրենիքը»—հաւատացնում է մեզ հեղինակը և դորանով վերջացնում Ռուզանի դերը և ամբողջ պիեսը։ Իմ ընթերցողները հասկանում են արդէն թէ այդ ինչ տեսակ հերոսութիւն է ուզում ներկայացնել մեզ պր. Մուրացանը իւր «Ռուզանով»։ Ճշմարիտ, ես գտնում եմ որ դժուար է աւելի վիրաւորական կերպով խօսել մի ազգի զգացմունքին քան այդ անում է պր. Մուրացանը։ Ազատել հայրենիք՝ վայր դնելով զէնք ու հրացանը և թշնամու անասնական կիրքը գոհացնելով—դա մի շատ տարօրինակ միջոց է և յամենայն դէպս՝ ոչ պատուաբեր միջոց։ Որ Ռուզանը իւր անձնուիրութեամբ ազատեց մահուան դատապարտուած հազար գերիներին—այդ պարզ է. բայց թէ նա դորանով իւր հայրենիքը ազատեց, մանաւանդ երբ նա, Ռուզանը, իւր խոստմունքի համեմատ, պէտք է իրան սպանէր երկրի սահմանի վերայ—ահա թէ ինչը հասկանալի չէ և որ բոլորովին արդէն անհասկանալին է, այդ հեղինակի՝ Ռուզանի բերանում դրած խօսքերն են՝ թէ—«ահա ինչպէս պէտք է հայրենիքը ազատել»։ Ինչ հերոսութիւն, ինչ բարոյախօսութիւն։

Պիեսի այդ անճոռնի բարոյախօսութիւնը արդէն արգելում է

ինձ մտնել նորա մանրամասնութիւնների մէջ և քննադատութիւնս շարունակել։ Ամօթ է, «Ուղղանը» պէտք է հակական բեսերտուարից հանել դէն գցել, և մենք միայն զարմանում ենք թէ այդ ինչպէս «Նոր-Դար» և «Մշակ» և «Արձագանք» և «Աղբիւր» և «Ցարազն» էլ հետը, պիեսի բնականութիւնից չլացած՝ այդքան կարող էին կուրանալ և պիեսի հիմնական միտքը, նորա բարոյականը աչքաթող անել։

Նորից մեզ մօտ հիւր եկաւ պ. Կարա-Մուրզան իւր բազուական երգեցիկ խմբով։ «Մուրճ»-ի ընթերցողները՝ նոր չը պիտի սպասեն այս ամսագրից գնահատութիւն Կարա-Մուրզայի նման մի գործիչի։ «Մուրճ»-ը այդ արել է իւր դոյութեան առաջին իսկ տարում, նուիրելով նրան մի կենսագրական յօդուած (տես «Մուրճ» 1889, № 5 «Կարա-Մուրզան և քառաձայն երգեցողութիւնը մեր մէջ, յօդուած Ղլիցեանի)։ Աւելի քան տարի ու կէս առաջ Կարա-Մուրզան եկաւ Թիֆլիս իւր մեծ խմբով. այս անգամ, հարկաւ միջոցների սղութեան պատճառով, նա մեզ մօտ էր իւր մեծ խմբի մի մասով միայն, բաղկացած մօտ 30 հոգուց։ Խմբի հետ էր այս անգամ պ. Ծովակը, որը իւր ձայնի ոյժը ցոյց տուեց Կարա-Մուրզայի ոչ այնքան դեկտեմբերի 30-ին, որքան յունուարի 1-ին տուած կոնցերտում։ Ուժեղ է այդ ձայնը, և ուրախալի է իմանալ որ այդ գեռ ևս դպրոց չ'անցած ձայնի մշակումը ապահովուած է չնորհիւ պ. Կարա-Մուրզայի ջանքերին, որի միջնորդութեամբ երգչի եղբայրը և գլխաւորապէս բաղուարնակ պ. Արսէն Կրասիլնիկեանը ապահովացրել են պ. Ծովակին Միլան գնալու և դպրոց անցնելու համար։ Այժմ նորա ձայնը դեռ մաքուր չէ, որպէս մաքուր է պր. Շահլամեանի տենորը և պր. Ամիրջանեանցի բարիտոնը։ Պր. Ծովակի ձայնը այժմ մի տեսակ աենորային բարիտոն է, որ աղաս վերցնում է sol նոտան, բայց որը խոստանում է դառնալ տենոր di forza։ Նորա ձայնի մէջ ամենագնահատելին՝ զանգն է (սեստաղնայ հնչիւնը), որի համար նա բարձր կը գնահատուի նոյն իսկ Իտալիայում։

Պր. Կարա-Մուրզան նորանով մինչ այժմ երեք ձայն պարգեւած կը լինի հասարակութեան՝ Շահլամեան, Վարդիկեան և Ծովակ, չը խօսած այն աւելի ևս մեծ գործի մասին, որ է՝ քառաձայն երգեցողութեան ծաւալումը հայ ազգի մէջ։ Անշուշտ այդ քանքարաւոր երաժշտական ուսուցչի ասպարէզը աւելի կ'ընդլայնուի, երբ նա Բագուից տեղափոխուած կը լինի Թիֆլիս, ուր նա ձայների աւելի մեծ նիւթ կը գտնի, հնարք կը գտնի իւր «Շուշան» օպերան բեմի վերայ դնելը յաջողացնել, հայոց դըպրոցներում ուսուցիչ լինել և եկեղեցիներում երգեցիկ խմբերը կառավարել։

ԼՈՒՍԻՆԻ